աթոռ կաթողիկոսութեան, որում՝ ըստ գրութեան Արարատ օրագրի Էջմիածնի (1886) թիկնածու եղած է. սակայն երկինք այլազգ տնօրինած են։ Թէպէտ և ընտրութիւնն յաջողած է և 'ի շարս հայրապետաց ազգիս Յովսէփ Դ կաթողիկոս ամենայն Հայոց կը յիշուի, այլ նա Էջմիածին չնստած՝ վախճանած է բազմարդիւն կենաց 'ի Թիֆլիս (1801). մարմինը տեղափոխուած է Էջմիածին, հանգչեցընելու 'ի քնարանի հայրապետացն Հայոց։

Ինչպէս կանխեցի գրեցի, Արղութեանց արքեպիսկոպոսն գաղթականութեան գործոյն մէջ անձամբ գլուխ կանգնած չէ, այլ այդ ծանր և վշտալի պաշտօնը կատարել է Պետրոս վարդապետ Մարկոսեան։ Գաղթականք տեղը հասնելէն վերջը, վարդապետին անունը բոլորովին կը նսեմանայ Արղութեանցի փառաւոր անուան դիմաց. արդէն իսկ կ'երևի որ Պետրոս վարդապետ իբրև ըստ ձեռանէ ոմն գործ տեսած է, կամակատար կամ գործիք Արղութեանցի, այսինքն ազգիս տարագնացութեան ուղեկից, վշտաց և գանգատանաց վշտակից և կարեկից, փառաւոր հանդիսատարութիւնքը թողլով սրբազան առաջնորդին։

Նոյնը կարելի չէ զրուցել Տէր Յակոբ Վարդապետևիչ վարդապետի համար. սա իբրև գլխաւոր գործող անձն, 80 տուն հայ կաթոլիկաց առաջնորդելով Յեկատերինեսլաւ քաղաքը, հիմն կը դնէ փայտաշէն Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն 1781 ին, և տասն և երկու տարի ազգիս վշտաց համբերութեամբ կարեկից լինելով, միջնորդ կը լինի տէրութեան, և բազում թախանձանօք յաջողցընելով վերադարձի հրամանը, 1790 ին, վերստին